




Լ. ՍԻՄՈՆՅԱՆ

Հայկական ՍՍՌ վաստակավոր նկարիչ

Թվում է թե ի՞նչ կապ կարող է լինել կավի, էսթետիկայի և տեխնիկայի միջև: Իսկ ընթերցողներից ոմանք հավանաբար արդեն կռահել են, որ խոսքը վերաբերում է դեկորատիվ կերամիկային՝ մի արվեստի, որն այնքան սրտամոտ է մեր դարի մարդուն:

Այսօր դժվար թե գտնվի ժամանակակից ոճով ձևավորված մի խանութ կամ նորակառույց կինոթատրոն, հյուրանոց կամ սրճարան, ուր կերամիկան իր գործնական կամ դեկորատիվ դերը չխաղա: Կերամիկական առարկաները մոտեք են գործել մեր տները, դարձել կենցաղի անբաժան մասը: Գնալով կերամիկական ավելի լայն տարածում է ստանում:

Հին արվեստ է կերամիկան: Այնքան հին, որ պեղումներն են մեզ նյութ տալիս անցյալում այդ արվեստի վիճակի

մասին: Անիի, Դվինի, Համբերտի, Կարմիր բլուրի, Գառնիի, Սևանի և Արթիկի հնագիտական պեղումները բավականին նյութ տվեցին հին և միջին դարերի հայկական կերամիկական ըստեղծագործությունների մասին: Այդ գործերն աչքի են ընկնում գեղեցիկ ձևով և գծերի ներդաշնակությամբ, հետաքրքիր կոլորիտով և դեկորատիվ տակտով, մի բան, որը խոսում է հեռավոր ժամանակների հայ բրուտների նուրբ ճաշակի և բարձր վարպետության մասին: Հնագիտական որոնումների յուրաքանչյուր կենտրոնի համար բնորոշ են միայն այդ վայրին հատուկ անկրկնելի ձևերը, գծերն ու զարդանկարները: Տարբեր են նույնիսկ ոչ միայն ջնարակված, այլև առանց ջնարակի կերամիկական թրծազանգվածների ձևերը: Դրանք բոլորն էլ ապշեց-

նում են իրենց բազմազանությամբ, վարպետների բացառիկ հնարամտությամբ ու երևակայությամբ:

Գտնված հախճապակյա և կերամիկական առարկաների մեծ մասն աչքի է ընկնում գեղարվեստական տեսակետից: Եվ իրոք, Հայաստանի պատմական թանգարանի հոյակապ հավաքածուն ուշագրավ է ոչ միայն այդ իրերի դուրս գործնական կիրառման առումով, դա մի իսկական գեղարվեստական կոեկցիա է, որի բոլոր նմուշները գեղեցիկ են և ղեկորատիվ իրենց ձևով ու գույնով:

Բրուտները ջնարակի գունավորման համար մեծ վարպետությամբ օգտագործել են պղինձը, որով այնքան հարուստ է Հայաստանը: Այստեղից էլ այդ առարկաների դրավիշ երանգները՝ մեկ փայլիլուն, մեկ բաց-փիրուզյա ու թավշյա-կանաչ: Այստեղ չկա սառը, անտարբեր մակերեսայնություն: Բրուտ վարպետները խուսափել են հարթությունից և ձգտել գունավոր գամմային: Երբեմն զարդաքանդակի ոչ ճիշտ գիծը կամ անհարթ նրբագծիկը վկայում են ոչ թե տեխնիկայի բացակայության, այլ բուռն ոգեշնչության և երևակայության առկայության մասին, այն մասին, ինչը զատում է արվեստի գործը անհոգի, ուտիլիտար կեղծիքից և համեստ արհեստավոր բրուտներին զարձնում ներշնչված արվեստագործների, որոնց ինքնատիպության շնորհիվ այժմ էլ հիանում ենք անցած դարերի հայկական կերամիկայով:

Մինչև XVIII դարը հետաքրքրությունը կերամիկական իրերի նկատմամբ մեծ էր: Նրանք զարդարում էին

տներն ու ապարանքները, փոխանակվում և տարածվում Հայաստանի սահմաններից հեռու: Սակայն ճենապակու՝ այդ բարդ և խորհրդավոր նյութի երեւման զալը, որի հրապուրիչ սպիտակությունը շատ էր հարմար նուրբ, փրփրուն ու պոետիկ իրեր ստեղծելու համար, կարճ ժամանակում դուրս մղեց կերամիկան: Նուրբ ճենապակու կողքին կերամիկական կերտվածքների առավել մոնումենտալ ձևերն սկսեցին կոպիտ ու ծանրաքաշ թվալ: Դրանք զաղարեցին ծառայել որպես դեկորատիվ իրեր և սկսեցին օգտագործվել միայն կենցաղային համեստ նպատակների համար:

Կենցաղային այդ առարկաները հիմնականում պատրաստվում էին գյուղերում: Դվինից ոչ հեռու ընկած Յուվա գյուղը մինչև օրս էլ հանդիսանում է բրուտագործական արվեստի օջախ: Դա մասամբ բացատրվում է այդ վայրերում հարուստ կավահանքերի առկայությամբ:

Հետաքրքիր է, որ Հայաստանի հյուսիսային շրջաններում բրուտագործությունը զբաղվում են հիմնականում կանայք: Տներն այդ վայրերում կառուցում են Արթիկ տոֆից, բայց հարթ կտուրներով: Բրուտները կավը պահում են տան մոտակայքում կամ կտուրների (հավանորեն պապերից են ժառանգել մշակելու այդ հմտությունը): Նրանք կավն այդպես թողնում են ամբողջ ամառվա կամ ձմեռվա ընթացքում, մինչև այն մաքրվում է ավելորդ աղերից ու խառնուրդներից և հետո միայն օգտագործում:

... Հիշում եմ, 1947 թվականին էր, Պեմդաշենում: Երեկոյանում էր: Արևի ծիրանագույն շողերը ներս էին լցվել սենյակի լայն պատուհանից: Հողն հատակին փոված գեղեցիկ, նախշուն կապերտին, բրուտագործական դուրգի

«Կերամիկա» տերմինն ընդգրկում է կոպիտ աղյուսից մինչև ճենապակյա գավաթ հասկացողությունը: Բայց կենցաղում ընդունված է կերամիկա անվանել վարմիր կավից պատրաստված իրերը:

առաջ նստել էր դեռատի կինը և երգելով Կոմիտասի «Կուժն առա, ելա սա-
րը», դուրգի վրա էր դնում սափոր, սա-
փորի հետեւից: Եվ կյանք ստանալով
սրանից, սափորները հենց այդտեղ
դառնում էին այնպես չքնաղ ու սլա-
ցիկ, ինչպես իրենց պատրաստող կինը:
Թրծում էր նա իր կավեղեն իրերը հենց
այդտեղ, տան կողքին, հասարակ վա-
ռարանում: Զնարակով շէր պատում, և
նրանք պահպանում էին թրծակավի
բնական գույնը:

Եվ այսպես, Պեմզաշենում, բրուտա-
գործուհին միայնակ իրագործում էր
այդ արվեստի ողջ տեխնիկան: Նա իր
ստեղծածի հեղինակն էր այս բառի
լիակատար իմաստով:

Երբեմն բրուտն աշխատում է առանց
դուրգի՝ ուղղակի ծեփելով: Այդ դեպ-
քում շինվածքը ստացվում է փոքր-
ինչ անհավասար հաստությամբ, տեղ-
տեղ քիչ կոր, բայց այդ բոլորով հան-
դերձ՝ զրավիչ ու կենդանի:

Ներկայումս, երբ կերամիկան այն-
քան լայն կիրառում ունի մեր կյանքի
գրեթե բոլոր բնագավառներում, սկսած
օդանավից մինչև մանկական խաղա-
լիքը, բնական է, որ նրա տնայնագոր-
ծական արտադրության եղանակը շէր
կարող բավարար համարվել:

Կերամիկական իրերի աճող պահան-
ջարկն այսօր դժվարությամբ են բա-
վարարում նույնիսկ կերամիկական
կոմբինատները, ուր տեխնոլոգիական
ողջ պրոցեսը մասսայից մինչև ջնա-
րակ, մեքենայացված է: Եթե բրուտը
դուրգի վրա միանգամից կարող էր
պատրաստել միայն մի պնակ կամ մի
գավաթ, ապա այժմ, մեքենայացման
շնորհիվ, կարելի է ստանալ մի քանի
պնակ կամ գավաթ:

Կերամիկական արվեստը բաժան-
վում է երկու փուլի՝ սկզբնական մտա-
հղացում, էսքիզի ստեղծում և բուն

պատրաստում: Եվ, որովհետև կերա-
միկական ստեղծագործությունը դա և՛
ձև է, և՛ գույն, և՛ զարդանկար, և՛
ֆակտուրա, ապա այդ կոմպոնենտե-
րից թեկուզ մեկի խախտումից տու-
ժում է ողջ մտահղացումը: Այդ պատ-
ճառով մասսայի, ջնարակի ու թրծման
որակից է հաճախ կախված լինում ըս-
տեղծագործության բախտը:

Իսկ այժմ համառոտակի նկարա-
գրենք այն ճանապարհը, որ անցնում
է կերամիկական շինվածքը էսքիզի
ստեղծումից հետո մինչև որ դառնում
է գավաթ ու սափոր, ծաղկաման ու
կճուճ, խաղալիք ու զարդարանք:

ՄԱՍՍԱ. Կերամիկական իրերը պատ-
րաստվում են մի կամ մի քանի տեսակ
վերամշակված կավային մասսայից
կամ կավից և լրացուցիչ նյութերից՝
(դաշտային սպաթ, կվարց, շամոտ և
այլն): Այս նյութերի ընտրությամբ և
հարաբերությամբ, որով նրանք խառ-
նվում են, պայմանավորված է այս
կամ այն մասսայի՝ ճենապակու, հախ-
ճապակու, թրծակավի և այլ նյութերի
ստացումը: Կավային մասսա ստանա-
լու համար նախօրոք չորացնում և
խառնում են կավի բնական տեսակնե-
րը, մաղում, ապա բաց են անում ջրի
մեջ և լվացման ու քամելու միջոցով
(որի ընթացքում առանձնանում են ա-
վելորդ խառնուրդների ծանր մասնիկ-
ները) ստանում համասեռ հեղուկ մաս-
սա: Այնուհետև նրանից հեռացնում են
ավելորդ խոնավությունը, որպեսզի
հնարավոր լինի գունավորող, կավի
հրակայունությունը կամ հալման աս-
տիճանը բարձրացնող նյութերի խառ-
նումը: Ստացված մասսան մեքենայով
կամ ձեռքով հունցում են, որպեսզի բո-
լոր բաղադրամասերն ունենան համա-
սեռ վիճակ, այսինքն՝ մասսայի ըն-
դարձակման գործակիցը բոլոր մասե-
րում լինի միատեսակ: Դրա համար



Հ. ՍԻՄՈՆՅԱՆԻ ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ:

«Գիտություն և տեխնիկա», № 4 1963



կալալային մասսան պահում են հատուկ պահեստներում և նկուղներում. որքան երկար պահվի կալալային մասսան, այնքան պլաստիկ ու համասեռ կդառնա:

Կերամիկական (բառի լայն հասկացողութեամբ) մասսայից այս կամ այն ձևի ստեղծումը կատարվում է հետևյալ կերպ. 1. Ձևավորում ձեռքի միջոցով՝ ծեփում: Այս եղանակը կիրառվում է առավել բարդ՝ ձևավորում պահանջող իրերի համար: 2. Ձևավորում (ճախարակում) բրուտագործական գուրգի վրա: 3. Ձևավորում կաղապարի միջոցով (ձուլում և դրոշմում): Նրկրորդ եղանակը կիրառվում է շրջանի լայնակի կտրվածք ունեցող, իսկ երրորդ եղանակը ոչ կլոր, ուղիղձային և ալլ, մեծ մասամբ գիպսե, առարկաների համար:

ԹԻՄՈՒՄ: Կալալային իրերը վառարաններում կամ բնական ճանապարհով լավ շորացնում են, ապա թրծում: Թրծումը կատարվում է մեկ կամ մի քանի անգամ: Թրծակալն, օրինակ, թրծվում է մեկ անգամ, ջնարակված առարկան՝ երկու, ջնարակի վրայից գեղարվեստորեն գունավորված իրերը երեք և ավելի անգամ: Թրծման ջերմաստիճանը տատանվում է 600—1400⁰-ի սահմաններում:

ՋՆԱՐԱԿՆԵՐ: Թրծազանգվածի ծրծանցումը կանխելու և գեղեցիկ տեսք տալու համար կերամիկական առարկաները պատում են ներկով, անդրալու, էմալով, ջնարակով: Ջնարակն ու էմալը իրենցից ներկայացնում են կերամիկական թրծազանգվածի մակերեսին նուրբ թաղանթի կամ շերտի ձևով ամրացված ապակի:

Ջնարակները լինում են մի քանի տեսակ՝ օբսիդացնող, վերականգնող, փայլուն, բյուրեղային, փայլատ, կիսափայլատ, կրակլի: Մի քանի ձևով է կատարվում նաև ջնարակման գծանշումը (թաթախում, վրձնում, ջրում և ջրցանում):

Պատվածքներն իրենց քիմիական բաղադրությամբ բաժանվում են հետևյալ խմբերի. 1. Կապարե ջնարակներ՝ առավել դյուրահալ և գեղարվեստորեն հարուստ: 2. Բորակային ջնարակներ՝ առավել կարծր, դժվարահալ և փայլուն: 3. Դաշտասպաթային ջնարակներ՝ չափազանց դժվարահալ, կարծր և փայլուն: 4. էմալներ (սրանք գրեթե նույն կապարե ջնարակներն են, միայն սրանց բաղադրության մեջ կան անագ, որը նրանց դարձնում է անթափանց և ավելի ամուր ու սպիտակ):

Անգորայի, ջնարակի և էմալի տարբեր գույների ստացումը կատարվում է նրանց մեջ մետաղների օքսիդ ավելացնելով:

Այսպիսին է կերամիկական տեխնիկան:

Եթե XVIII դարում կերամիկան իր տեղը զիջում է առավել նուրբ ու հեքիաթային ճենապակուն, ապա XX դարում, երբ առանձնապես աշխույժ հետաքրքրություն է նկատվում ազգային կուլտուրաների բուն ակունքների նրկատմամբ, մարդկանց ճաշակին առավել մոտ է կանգնում կերամիկան՝ իր պարզ, լակոնիկ ձևով, իր դեկորատիվությամբ և վառ գունային հնարավորություններով:

